



## **Կարգապահական գործ թիվ ԿԳ-19235**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2020 թվականի փետրվարի 25-ի թիվ 57-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ԹԻՎ ԿԳ/53-Ա**

### **ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԱԹԱՆԵՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՆՍՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Նելլի Հարությունյան, Արայիկ Ղազարյանի և Կարեն Մեծլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,  
քննության առնելով փաստաբան Տիգրան Աթանեսյանի (արտոնագիր՝ թիվ 78) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

### **Պ Ա Ր Ձ Ե Ց՝**

#### **1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (**այսուհետ՝ նաև Դատարան**) դատավոր Արթուր Մկրտչյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԴ/4202/02/18 քաղաքացիական գործից առանձնացված թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործի շրջանակներում համապատասխանողներ Վլադիմիր Սերգեյի և Սուսաննա Համլետի Գասպարյանների ներկայացուցիչ Տիգրան Աթանեսյանը (**այսուհետ՝ նաև Պատասխանող**) ներկայացրել է հայցադիմումի պատասխան, որում իր լիազորությունների շրջանակում իրականացված դատավարական գործողությունները, կայացված միջանկյալ դատական ակտերը որակել է որպես դատավարական «աճաբարարություն», հայցվորի օգտին կատարվող գործողություն, այն է՝ ակնհայտ ապօրինություն, և կարծես թե ամփոփելով իր միտքը՝ նշել է, թե ակնհայտ է դատավորի ապօրինի վարքագիծը և մեղադրել նրան դատավարական օրենքն ակնհայտ ոտնահարելու, հայցվորին հաճոյանալու և հովանավորելու մեջ: Բացի այդ, փաստաբան Տիգրան Աթանեսյանը դատարանին ներկայացված հայցադիմումի պատասխանում նշել է, թե արքայազնի և զավեշտի շարքից է այն, որ

**25 փետրվարի, 2020թ.  
թիվ ԿԳ/53-Ա**

2019 թվականի փետրվարի 7-ին ՀՀ որևէ դատավոր կարող է կայացնել «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշում՝ ղեկավարվելով ուժը կորցրած 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, այլ ոչ թե 2018 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Դիմողը նշել է, որ փաստաբան Տիգրան Աթանեսյանն իր նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք և իրեն զրպարտել է՝ կապված վերոգրյալ քաղաքացիական գործը դատարանում քննելու հետ:

Դիմողը նաև նշել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստաբանի արարքը պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 3-րդ մասի և 344-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներ, ինքը դիմել է ՀՀ գլխավոր դատախազին և միջնորդել հարուցել քրեական գործ:

Վերոգրյալի հիման վրա Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և վերջինիս ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Դիմողը դիմումին կից ներկայացրել է Տիգրան Աթանեսյանի կողմից Դատարանին ներկայացված 08.04.2019 թվականի հայցադիմումի պատասխանի պատճենը:

### **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Պալատի նախագահի կողմից 30.10.2019թ. թիվ 463-Ա/ԿԳ-19235 որոշմամբ փաստաբան Տիգրան Աթանեսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

04.11.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես Մաթևոսյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

### **3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

#### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.**

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Պալատի խորհրդին նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

#### **3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.**

Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել:

Պալատի խորհրդին նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

#### **3.3. Վկաների ցուցմունքները.**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

**4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.**

26.12.2019թ. Նախապատրաստողը կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի խորհրդին է հանձնվել 27.12.2019 թ.-ին:

Պալատի խորհրդի նիստը տեղի է ունեցել 25.02.2020թ. ժամը 18:50-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

**5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

***Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.***

- Պատասխանողը թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործով հանդիսանում է պատասխանողների ներկայացուցիչը: *(Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Պատասխանողի կողմից կազմված հայցադիմումի պատասխանով):*
- Պատասխանողը ներկայացրել է հայցադիմումի պատասխան, որում Դատարանի դատավարական գործողությունները, կայացված միջանկյալ դատական ակտերը որակել է որպես դատավարական «աճաբարություն», հայցվորի օգտին կատարվող գործողություն, այն է՝ ակնհայտ ապօրինություն, և կարծես թե ամփոփելով իր միտքը՝ նշել է, թե ակնհայտ է դատավորի ապօրինի վարքագիծը և մեղադրել նրան դատավարական օրենքն ակնհայտ ոտնահարելու, հայցվորին հաճոյանալու և հովանավորելու մեջ: Բացի այդ, Պատասխանողը դատարանին ներկայացված հայցադիմումի պատասխանում նշել է, թե արտուրդի և զավեշտի շարքից է այն, որ 2019 թվականի փետրվարի 7-ին ՀՀ որևէ դատավոր կարող է կայացնել «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշում՝ ղեկավարվելով ուժը կորցրած 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, այլ ոչ թե 2018 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: *(Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Պատասխանողի՝ հայցադիմումի կողմից կազմված հայցադիմումի պատասխանով):*

**6. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Տիգրան Աթանեսյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 15.03.2001թ., և 2017-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 13 կարգապահական վարույթ (3 ընթացիկ և 10 ավարտված վարույթներ)՝ չհաշված սույն կարգապահական վարույթը:

- Խորհրդի 25.05.2017թ. թիվ ԿԳ/55-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ տուգանքի՝ 150.000 ՀՀ դրամի չափով և լրացուցիչ տույժի՝ իր հաշվին մասնակցության 8 ժամ լրացուցիչ վերապատրաստման դասընթացների Կանոնագրքի 2.7.2 և 3.1.8 ենթակետերի խախտման համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:
- Խորհրդի 17.10.2017թ. թիվ ԿԳ/94-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ տուգանքի՝ 100.000 ՀՀ դրամի չափով և լրացուցիչ տույժի՝ իր հաշվին մասնակցության 8 ժամ լրացուցիչ Կանոնագրքի 2.2.3, 5.1.2 և 5.2.1 (1) ենթակետերի խախտման համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:
- Խորհրդի 17.01.2018թ. թիվ ԿԳ/02-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:
- Խորհրդի 07.07.2018թ. թիվ ԿԳ/101-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ խիստ նկատողության վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:
- Խորհրդի 11.08.2018թ. թիվ ԿԳ/191-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ խիստ նկատողության Կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտման, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:
- Խորհրդի 11.08.2018թ. թիվ ԿԳ/192-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ խիստ նկատողության Կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտման, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:
- Խորհրդի 11.08.2018թ. թիվ ԿԳ/195-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցման Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտման համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:
- Խորհրդի 13.02.2019թ. թիվ ԿԳ/32-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ 10.000 ՀՀ դրամ տուգանքի վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:
- Խորհրդի 11.06.2019թ. թիվ ԿԳ/87-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար, և որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

- Խորհրդի 14.01.2020թ. ԿԳ/02-Ա որոշմամբ Տիգրան Աթանեսյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով, 4 (չորս) ակադեմիական ժամ ժամաքանակով: Որոշումն ուժի մեջ մտած է:

### **7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

**Պալատի խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի կողմից 30.10.2019թ. թիվ 463-Ա/ԿԳ-19235 որոշմամբ փաստաբան Տիգրան Աթանեսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

**«Փաստաբանության» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:**

**Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:**

Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Այս առումով կարևոր է հիշել, որ փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Փաստաբանի գործունեությունը, հետևաբար, նրա վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, այդ թվում՝ իրավաբանի մասնագիտության հանդեպ ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես:

Փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծի դրսևորումից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել նրա՝ որպես իրավապապաշտպան գործառույթ իրականացնող իրավաբանի հեղինակությունը, ազնվությունն ու անձեռնմխելիությունը: Հակառակ պարագայում փաստաբանի ոչ բարեխիղճ վարքագիծը բացասական ազդեցություն է ունենում ինչպես այդ փաստաբանի, այնպես էլ փաստաբանության ինստիտուտի հանրային վարկանիշի վրա:

Փաստաբանի նշյալ պարտականությունը տարածվում է նաև դատարանում փաստաբանի վարքագծի նկատմամբ, որը պետք է համապատասխանի դատավարության կանոններին և հարգալից լինի դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ:

Մասնավորապես, փաստաբանը պարտավոր է ենթարկվել դատավարական կանոններին՝ ներառյալ հարգանքով վերաբերվել դատարանին և դատավարության մյուս մասնակիցներին: Միևնույն ժամանակ փաստաբանի սույն պարտականությունը որևէ կերպ չպետք է կաշկանդի փաստաբանին իր վստահորդի շահերն անվախ պաշտպանելու հարցում՝ ընդհուպ մինչև հաշվի չառնելով սեփական շահերը կամ իր նկատմամբ ցանկացած հետևանք, որը կարող է ծագել նաև դատավորի գործողությունների հետևանքով: Այսինքն՝ փաստաբանը, դատարանում ներկայացնելով իր վստահորդի շահերը, պարտավոր է ապահովել ողջամիտ հավասարակշռություն իր մասնագիտական պարտականությունները ջանասիրաբար և բարեխղճորեն կատարելու և դատարանի ու դատավարության մասնակիցների նկատմամբ հարգալից վերաբերմունք ցուցաբերելու պարտականությունների միջև:

Հետևաբար, պետք է տարանջատվի փաստաբանի օրինական և պատշաճ վարքագիծ դրսևորելու պարտականությունը փաստաբանի մասնագիտական և դատավարական անկախությունից, որը պետք է երաշխավորվի, և մասնավորապես, դատարանի նկատմամբ պատշաճ վերաբերմունք դրսևորելու պահանջը չպետք է մեկնաբանվի այնպես, որ խոչընդոտվի իր վստահորդի շահերն անկաշկանդ և անվախ ներկայացնելու փաստաբանի իրավունքը:

Ընդ որում, փաստաբանի սույն պարտականությունները և երաշխիքները տարածվում են նրա թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքի (կազմված դատավարական և այլ փաստաթղթերի) վրա:

Խորհուրդը գտնում է, որ գործի դատական քննության ընթացքում փաստաբանի սույն երկակի պարտականությունը բխում է փաստաբանի սոցիալական դերից և նշանակությունից և դրանով պայմանավորված՝ փաստաբանի պատասխանատվությունից մի կողմից վստահորդի առջև, իսկ մյուս կողմից՝ դատական իշխանության, որի գործառույթների պատշաճ իրականացմանը նպաստելուն է նպատակաուղղված փաստաբանի գործունեությունը: Փաստաբանը կարող է պատշաճորեն և արդյունավետորեն ներկայացնել և պաշտպանել իր վստահորդի շահերը միայն այն դեպքում, երբ ինքն ազատ է դատարանի, պետական այլ մարմինների և մասնավոր անձանց անօրինական և անհամաչափ ազդեցությունից: Միևնույն ժամանակ փաստաբանի սոցիալական կարգավիճակից բխում է նրա առաքելությունը նպաստել արդարադատության իրականացմանը, որը կարող է պատշաճ իրացվել, եթե փաստաբանը դատարանի և դատավարության մասնակիցների հետ հարաբերություններում գործի օրինականության և փաստաբանական էթիկայի շրջանակներում:

Պալատի խորհրդի նշյալ եզրահանգմանը համահունչ է նաև միջազգային պրակտիկան:

**Եվրոպայում փաստաբանի մասնագիտության հիմնարար սկզբունքների հռչակագրի (այսուհետ՝ նաև Հռչակագիր) «a» սկզբունքի համաձայն՝** *իր վստահորդին խորհրդավորություն տրամադրելիս կամ վստահորդին ներկայացնելիս փաստաբանը պետք է լինի ազատ քաղաքականապես, տնտեսապես և մրավոր առումով: Դա նշանակում է, որ փաստաբանը պետք է անկախ լինի պետական կամ այլ ազդեցիկ շահերից...*

**Եվրոպայի փաստաբանների վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ նաև ԵՓՎԿ) 2.1.1 ենթակետի համաձայն՝** *փաստաբանի բազմաթիվ*

պարտականություններ պայմանավորված են փաստաբանի բացարձակ անկախությամբ, ցանկացած ազդեցությունից ազատությամբ՝ հատկապես... արտաքին ճնշումից: Այդպիսի անկախությունը նույնչափ անհրաժեշտ է արդարադատության գործընթացի նկատմամբ վստահության համար, որքան դատավորի անկողմնակալությունը: Հերևաբար, փաստաբանը պետք է խուսափի իր անկախությանը որևէ խոչընդոտից և իր մասնագիտական չափորոշիչների ստորադասումից ...դատարանին... հաճոյանալու նպատակով:

**ԵՓՎԿ-ի 2.1.2 ենթակետի համաձայն՝** սույն անկախությունն անհրաժեշտ է ոչ դատական և դատական գործերով: Փաստաբանի խորհրդատվությունն անարժեք է, եթե կատարվում է...՝ ի պատասխան արտաքին ճնշման:

Վերոնշյալ միջազգային իրավական ակտերում պետական կամ արտաքին ճնշման ներքո հասկացվում է նաև դատարանի հնարավոր ոչ իրավաչափ կամ անհամաչափ ազդեցությունը, որը կարող է սահմանափակել փաստաբանի անկախությունը դատարանում ներկայացուցչություն իրականացնելիս:

Բացի այդ, Խորհուրդը գտնում է, որ դատավարության ընթացքում դատարանի և փաստաբանի՝ որպես դատավարության տարբեր սուբյեկտների դիրքորոշումները կարող են չհամընկնել և առաջացնել հակասություն, որի հետևանքով փաստաբանն իր վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու ընթացքում կարող է հանդիպել դատարանի որոշակի հակազդեցության:

Այս տեսանկյունից և ելնելով փաստաբանի գործունեության երաշխիքներից՝ որևէ փաստաբանի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու հարցը քննարկելիս փաստաբանը պետք է ունենա պաշտպանվածության բարձր իրավական շեմ:

Սույն պարագայում Դիմողը Պատասխանողին մեղադրում է նրա համար, որ հայցադիմումի պատասխանում Պատասխանողը Դիմողի լիազորությունների շրջանակում իրականացված դատավարական գործողությունները, կայացված միջանկյալ դատական ակտերը Դիմողի՝ որպես դատարանի գործողությունները որակել է դատավարական «աճպարարություն», հայցվորի օգտին կատարվող գործողություն, այն է՝ ակնհայտ ապօրինություն և կարծես թե ամփոփելով իր միտքը՝ նշել է, թե ակնհայտ է դատավորի ապօրինի վարքագիծը և մեղադրել նրան դատավարական օրենքն ակնհայտ ոտնահարելու, հայցվորին հաճոյանալու և հովանավորելու մեջ, ինչպես նաև նշել է, թե աբսուրդի և զավեշտի շարքից է այն, որ 2019 թվականի փետրվարի 7-ին ՀՀ որևէ դատավոր կարող է կայացնել «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշում՝ ղեկավարվելով ուժը կորցրած 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, այլ ոչ թե 2018 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

**ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

**Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև ՄԻԵԿ) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և

հրապարակային դատաքննության իրավունք:

**Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԿ)** որպես ՄԻԵԿ-ով նախատեսված արդար դատաքննության պարտադիր փուլի ճանաչում է սեփական գործը մյուս կողմի հետ հավասար պայմաններում ներկայացնելու կամ այլ կերպ կոչվող զենքերի հավասարության իրավունքը, որը ներառում է նաև անձի՝ քաղաքացիական հայցից պաշտպանվելու իրավունքը՝ ներառյալ հայցադիմումի պատասխան և ապացույցներ ներկայացնելու իրավունքը:<sup>1</sup>

**Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՔԴՕ) 139-րդ հոդվածի համաձայն՝** պատասխանողը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դատարան է ներկայացնում հայցադիմումի պատասխան: Հայցադիմումի պատասխանը ներկայացվում է գրավոր՝ սույն օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պահանջների պահպանմամբ: Հայցադիմումի պատասխանը պետք է լինի ընթեռնելի: Ելնելով գործի առանձնահատկություններից՝ դատարանը կարող է պատասխանողի միջնորդությամբ երկարաձգել պատասխան ներկայացնելու ժամկետը:

2. Հայցադիմումի պատասխանը պետք է պարունակի՝

- 1) դատարանի անվանումը, որին ներկայացվել է հայցադիմումը,
- 2) գործի համարը,
- 3) պատասխանողի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) հասցեից), պատասխանող քաղաքացու անձնագրային տվյալները, պատասխանող իրավաբանական անձի պետական գրանցման համարը,
- 4) գործին մասնակցող այլ անձանց անունը (անվանումը),
- 5) հայցադիմումում ներկայացված պահանջը ընդունելու կամ դրա դեմ մասնակի կամ ամբողջությամբ առարկելու մասին դիրքորոշումը,
- 6) հայցի փաստական հիմքերի վերաբերյալ դիրքորոշումը,
- 7) պատասխանի (առարկությունների) հիմքում դրված փաստերը,
- 8) հայցադիմումի պատասխանին կից ներկայացվող փաստաթղթերի և ապացույցների ցանկը:

3. Պատասխանում կարող են նշվել՝

- 1) վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառման ենթակա իրավական նորմերը.
- 2) այն ապացույցները, որոնք հաստատում են առարկությունների հիմքում դրված փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե որ ապացույցն ինչ փաստի հաստատմանն է ուղղված.
- 3) պատասխանողի միջնորդությունները.
- 4) այլ տեղեկություններ, որոնք նշանակություն ունեն գործի քննության և լուծման համար.
- 5) էլեկտրոնային հաղորդակցության միջոցի վերաբերյալ տեղեկությունը՝ ծանուցումն այդ միջոցով իրականացնելու միջնորդությամբ:

<sup>1</sup> St' u European Court of Human Rights, decision from 11th of February 1975, Golder versus England, European Court of Human Rights, decision from 27th of April 2000, Kuopila versus Finlandia, European Court of Human Rights, decision from 11th November 2006, Dima versus Romania և այլն:



**Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:**

Ելնելով վերոգրյալից՝ Պալատի խորհուրդը հաշվի է առնում, որ հայցադիմումի պատասխանի ինստիտուտն արդար դատաքննության հիմնարար իրավունքի և, մասնավորապես, մրցակցային դատավարության և կողմերի իրավահավասարության դատավարական սկզբունքների իրացման երաշխիքներից է և բխում է սեփական գործը ներկայացնելու դատավարության կողմի իրավունքից: Ներկայացնելով հայցադիմումի պատասխան՝ պատասխանող կողմն իրացնում է հայցվոր կողմի կողմից իրեն վերագրվող մեղադրանքից և ներկայացված պահանջից՝ հայցից պաշտպանվելու իրավունքը, որի միջոցով դատարանին ներկայացնում է գործի վերաբերյալ սեփական տեսակետը: Վերջինս բնականորեն պետք է տարբերվի հայցվոր կողմի փաստարկներից և պնդումներից և, համապատասխանաբար, կարող է պարունակել հակընդդեմ մեղադրանքներ և պահանջներ՝ ուղղված հայցվոր կողմի դեմ, ինչպես նաև հայցվոր կողմի փաստարկները կասկածի տակ դնող դիրքորոշում: Իրացնելով մեղադրանքից պաշտպանվելու իր իրավունքը՝ պատասխանող կողմը կարող է քննադատել նաև դատարանի գործողությունները, վիճարկել դրանց իրավաչափությունը, կասկածի տակ դնել դատավորի անաչառությունը և իրականացնել իր պաշտպանությանն ուղղված այլ գործողություններ:

Եթե պատասխանող կողմն ունի փաստաբան, ապա վերջինս պետք է նշված գործողություններն իրականացնի իր վստահորդի անունից և նրա փոխարեն՝ ելնելով իր վստահորդի լավագույն շահերից և իրացնելով իր վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալու պարտականությունից բխող իր դատավարական իրավունքները, որոնք տվյալ դեպքում՝ սահմանված են ՔԴՕ-ով: Ընդ որում, փաստաբանի համար բացասական իրավական հետևանք չպետք է առաջացնի մյուս կողմի կամ դատարանի վերաբերյալ բացասական և քննադատական դատողություններն անհիմն համարվելը կամ չհաստատվելը, քանի որ մրցակցային դատավարությունում կողմերը և նրանց ներկայացուցիչներն իրավական բանավեճի միջոցով պաշտպանում են իրենց սուբյեկտիվ դիրքորոշումները՝ ներառյալ դատարանի գործողությունների կամ անգործության վերաբերյալ: Հայցադիմումի պատասխանի՝ որպես պատասխանող կողմի պաշտպանության իրավունքի իրացման հիմնական դատավարական միջոցներից մեկի պնդումների և իրավական հիմնավորումների նկատմամբ թույլատրելիության և հիմնավորվածության բարձր շեմի կիրառման պարագայում գործնականում էապես կսահմանափակվի նշյալ ինստիտուտի կիրառման շրջանակը և արդյունավետությունը, քանի որ հայցադիմումի գրեթե յուրաքանչյուր պատասխան դատարանի կողմից կարող է դիտարկվել ոչ իրավաչափ և անընդունելի՝ ելնելով կողմի կամ դատարանի գործունեությունից դժգոհ կողմի փաստաբանի կողմից հաստատապես դատարանի համար ոչ հաճելի ձևակերպումների առկայությունից:

Նշյալ հիմնավորումները վերաբերում են նաև Պատասխանողի հայցադիմումի պատասխանին:

Փաստաբանի կողմից իրականացվող նշյալ դատավարական գործողությունների նկատմամբ ոչ իրավաչափ և անհամաչափ սահմանափակումների կիրառումն ուղղակիորեն կսահմանափակի փաստաբանի անկախությունը, ինչի հետևանքով կտուժի և՛ փաստաբանության հանրային հեղինակությունը, և՛ արդարադատության նկատմամբ հանրային վստահությունը:

Միևնույն ժամանակ փաստաբանի կարգապահական պատասխանատվությունը պետք է վրա հասնի, երբ փաստաբանի կողմից կիրառվում են ոչ թե կողմի դատավարական վարքագիծը կամ դատավորի մասնագիտական և դատավարական գործունեությունը թեկուզև խստորեն քննադատող, այլ կողմի կամ դատավորի անձը վիրավորող կամ նսեմացնող արտահայտություններ:

Տվյալ պարագայում Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից կազմված հայցադիմումի պատասխանում տեղ գտած նշյալ արտահայտությունները պարունակում են որոշակի գործով դատավորի գործունեության քննադատություն և անիրավաչափության հիմնավորումներ, որոնք, սակայն, չեն վերաբերում դատավորի անձին, չեն վիրավորում նրա արժանապատվությունը, այլ միայն ուղղված են դատավորի մասնագիտական վարքագծի վիճարկմանը:

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի վարքագծում առկա չէ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ հոդվածի, 39.6-րդ, 39.8-րդ հոդվածների և ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի պահանջներով՝ Խորհուրդը

## **Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. Պալատի նախագահի 30.10.2019թ. թիվ 463-Ա/ԿԳ-19235 որոշմամբ փաստաբան Տիգրան Աթանեսյանի (արտոնագիր՝ թիվ 78) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հարկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:**

**2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Տիգրան Աթանեսյանին և Դիմողին:**

*Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստրա.նալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի  
խորհրդի անդամ՝

Կարապետ Աղաջանյան

**25 փետրվարի, 2020թ.  
թիվ ԿԳ/53-Ա  
ք. Երևան**